

**Արման Արսենի Բաբախանյանի «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ԺԲ.00.05  
«Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»  
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում: Քրեական ենթամշակույթի մաս կազմող վարքականոնների ներթափանցումը հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներ հիմք է տալիս խոսելու ոչ միայն սոցիալ-բարոյական խնդիրների, այլև պետական ինստիտուտների նկատմամբ վստահության նվազման, իրավապահ մարմինների լիազորությունների արդյունավետ իրացման բարդությունների ու քրեաիրավական քաղաքականության կատարելագործման անհրաժեշտության մասին:

Քրեական ենթամշակույթը վտանգավոր է նրանով, որ ձևավորում է հակաիրավական ինքնավար համակարգ, որը ձևավորում է իրավունքի հետ մրցող «ստվերային» նորմեր: Այս երևույթը հատկապես տեսանելի է քրեակատարողական հիմնարկներում, անչափահասների շրջանում, որոշ չափով՝ գինված ուժերում: Քրեական ենթամշակույթի ազդեցության պահպանման պատճառներից է նաև հասարակական գիտակցության մեջ արմատավորված «գողական» ավանդույթների և դրանց առնչվող հակաիրավական երևույթների ուժանտիզացիայի երկարամյա ժառանգությունը, որը ևս բարդացնում է իրավապահ և կանխարգելիչ ջանքերի արդյունավետությունը: Բացի այդ, նոր քրեական օրենսդրության գործողության պայմաններում գործնականում առաջանում են քրեական ենթամշակույթին առնչվող հանցատեսակների որակման և սահմանազատման խնդիրներ:

Այս համատեքստում քրեական ենթամշակույթից բխող մարտահրավերների դեմ պայքարը դառնում է պետական անվտանգային քաղաքականության անբաժանելի ուղղություն, իսկ քրեական ենթամշակույթից բխող վտանգների բազմաշերտ բնույթը, դրանց դրսևորումների դինամիկան և դրանց դեմ պայքարի իրավական ու կազմակերպչական մեխանիզմների կատարելագործման պահանջը վկայում են ատենախոսության թեմայի արդիականության և կարևորության մասին:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, որի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը. այն է՝ քրեական ենթամշակույթին առնչվող քրեաիրավական նորմերի խոր վերլուծությունը, դրանցում առկա հակասությունների, թերությունների և բացթողումների բացահայտումը, օրենսդրական և իրավակիրառ մակարդակներում քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական հակազդեցության արդյունավետության բարձրացմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված քրեաիրավական միջոցների համակարգի մշակումը:

Ատենախոսությունն ունի կոտ տրամաբանական կառուցվածք. այն կազմված է ներածությունից, երկու գլուխներից, որոնք ներառում են ութ պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից, երկու հավելվածից:

Աշխատանքի առաջին գլխում ատենախոսն անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի տարածվածությանը և դրա դեմ քրեաիրավական պայքարի ընդհանուր հիմնախնդիրներին: Մասնավորապես, համակողմանի ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթի տարածման միտումները, քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման առանձին հարցեր, քրեական օրենսգրքի ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումների նախատեսման հիմնախնդիրը, քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեականացման սոցիալական պայմանավորվածությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է քրեական ենթամշակույթին առնչվող հանցատեսակների քրեաիրավական բնութագրին, որի շրջանակներում ատենախոսը վերլուծել է քննակրվող հանցակազմերի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև այդ հանցանքները կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչվող հարցերը:

Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփել է կատարված հետազոտության արդյունքները՝ ամփոփ ներկայացնելով իր եզրահանգումներն ու առաջարկությունները: Պետք է փաստել, որ հեղինակին հաջողվել է հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ ներկայացնել ինքնուրույն և գիտականորեն հիմնավորված հետևություններ, ինչպես նաև հիմնավոր օրենսդրական առաջարկություններ: Հեղինակի դատողություններն ու եզրահանգումներն ունեն գիտագործնական կարևոր նշանակություն և կարող են օգտակար լինել ինչպես նշված թեմայով հետազոտությունների, այնպես էլ քրեական օրենսդրության կատարելագործման տեսանկյունից:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծ քանակության աղբյուրների օգտագործմամբ, հարուստ փորձառական հիմքով: Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևություններն ու առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ատենախոսությունը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում ներկայացնել դրա վերաբերյալ որոշ նկատառումներ: Մասնավորապես՝

1. Ատենախոսության առաջին գլխի երրորդ պարագրաֆի շրջանակներում ատենախոսը քննարկման առարկա է դարձնում քրեական օրենսգրքի ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումների նախատեսման հիմնախնդիրը: Կատարված ուսումնասիրության արդյունքներով ատենախոսը, ի թիվս այլ հետևությունների, նշում է նաև, որ բացակայում է անհրաժեշտությունը ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու

ինստիտուտի կիրառման արգելք քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում, ինչպես նաև բացակայում է անհրաժեշտությունը նախատեսել հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական պատժի առավել բարձր վերին շեմ սահմանելու, երբ անձը կատարել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք (էջեր 46-49): Սակայն եթե օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելքի սահմանման անհրաժեշտության բացակայությունն ատենախոսը հանգամանորեն հիմնավորել է (ի թիվս այլնի՝ նաև փաստարկելով, որ նման արգելք նախատեսելը կարող է հանգեցնել հակառակ արդյունքի), ապա հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական պատժի առավել բարձր վերին շեմ սահմանելու անհրաժեշտության բացակայությունը հիմնավորվել է լոկ այն փաստարկով, որ գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված են հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական պատժի այնպիսի վերին շեմեր, որոնք հնարավորություն են տալիս ապահովել արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրացումը և պատժի նպատակներին հասնելը (էջ 48): Հաջորդիվ ատենախոսը նշում է նաև, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների համար հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական պատժի վերին շեմի հարցում տարբերակված մոտեցումը որևէ դրական ազդեցություն չի ունենա քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման գործում: Կարծում ենք, որ ատենախոսի նշված հետևությունը և կանխատեսումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն:

2. Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներով ատենախոսը հանգում է այն հետևության, որ բացակայում է գողական աշխարհի ստեղծելը քրեականացնելու անհրաժեշտությունը, հետևաբար, քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասը՝ գողական աշխարհի ստեղծելու մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել (էջ 75): Ատենախոսի այդ առաջարկությունը համարում ենք հիմնավորված և համաձայն ենք ներկայացված փաստարկների հետ: Սակայն եթե այդ առաջարկության իրագործման նպատակով քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածով պատասխանատվություն նախատեսվի միայն գողական աշխարհը ղեկավարելու համար, ինչպես դա առաջարկում է ատենախոսը, ապա քրեաիրավական արգելքի տիրույթից դուրս կմնա գործող քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի երկընտրելի արարքներից մեկը՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը: Գործող քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի մյուս երկընտրելի արարքի՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու համար քրեական պատասխանատվությունը կպահպանվի, քանի որ գողական աշխարհի ղեկավարելն իր մեջ ներառում է նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելը: Սակայն քրեական ենթամշակույթ կրող նոր խմբավորում ստեղծելը, որը գործնականում



հավանական առանձին արարք է, կիսայտնվի քրեական պատասխանատվության տիրույթից դուրս, այնինչ այդպիսի արարքները, մեր կարծիքով, ունեն քրեականացման համար բավարար հանրային վտանգավորություն: Քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը՝ հանցավոր կազմակերպություն ստեղծելը, չի կարող տարածվել քրեական ենթամշակույթ կրող նոր խմբավորում ստեղծելու բոլոր դեպքերի վրա, քանի որ քրեական ենթամշակույթ կրող նոր խմբավորումը կարող է չհամապատասխանել հանցավոր կազմակերպության բոլոր հատկանիշներին: Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ գործող քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածում միայն գողական աշխարհը ղեկավարելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հետ միաժամանակ անհրաժեշտ է քրեական օրենսգրքում պահպանել նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու համար քրեական պատասխանատվությունը:

3. Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում ատենախոսը նշում է՝ «(...) գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը, օրինակ՝ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելուն ներգրավված լինելու դեպքում գողական աշխարհին չանդամակցող անձի արարքը ենթակա է որակման գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինել: Իսկ գողական աշխարհի ղեկավարի կողմից գողական աշխարհի կառավարչական գործառույթների իրականացմանը, օրինակ՝ կարգապահությունը խախտած գողական աշխարհի անդամի նկատմամբ տույժի միջոց կիրառելուն, գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից օժանդակ ներգրավվածություն ունենալու դեպքում վերջինիս արարքը ենթակա է որակման գործող Օրենսգրքի 46-323-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես գողական աշխարհը ղեկավարելու օժանդակություն (...)» (էջեր 87-88): Կարծում ենք, որ բերված օրինակում անձի արարքը նույնպես պետք է որակել 324-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինել, այլ ոչ թե 46-323-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես գողական աշխարհը ղեկավարելու օժանդակություն: Նախ՝ գողական աշխարհի անդամի կողմից կարգապահությունը խախտելը, մեր կարծիքով, կարող է մեկնաբանվել որպես մասնավոր հարցերին առնչվող խնդիր, իսկ նրա նկատմամբ տույժի միջոց կիրառելը՝ մասնավոր հարցերին առնչվող խնդրի լուծում, հետևաբար՝ գողական աշխարհի նպատակ: Բացի այդ, գողական աշխարհը ղեկավարելը, մեր կարծիքով, բոլոր դեպքերում ուղղված է գողական աշխարհի նպատակների իրականացմանը, և եթե ընդունենք, որ անձը գողական աշխարհը ղեկավարելու հանցակից է (տվյալ դեպքում օժանդակող), ապա, ելնելով հանցակցության սուբյեկտիվ հատկանիշներից, պետք է ընդունենք նաև, որ այդ անձը գիտակցել է, որ իր արարքն ուղղված է կատարողի հանցանքի նպատակների, տվյալ դեպքում՝ գողական աշխարհի նպատակների իրականացմանը:

Այնուամենայնիվ, ներկայացված դիտողությունները կրում են մասնավոր բնույթ և չեն նվազեցնում ատենախոսի կողմից կատարված հետազոտության գիտական արժեքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած տասը գիտական հոդվածներում, սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ Արման Բաբախանյանի ատենախոսությունը պատրաստված է պատշաճ գիտական մակարդակով, ատենախոսության ձևավորման պահանջներին համապատասխան:

**Հետևություն՝** Արման Արսենի Բաբախանյանի «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները

համակարգող պրոռեկտոր

Միսակ Մարկոսյան

25 նոյեմբերի, 2025 թվական

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր Միսակ Մարկոսյանի ստորագրությունը հետևում է:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի մարդկային

ոչնությունների կառավարման բաժնի պետ



Արշակ Ավագյան

25 նոյեմբերի, 2025 թվական